(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 հուլիսի 2026 թվականի N 1128-Ա

ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ
ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման N 1 հավելվածի 24-րդ կետի 3-րդ ենթակետով և հիմք ընդունելով Սևակ Յախշիբեկյանի 2026 թվականի հուլիսի 7-ի դիմումը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Սևակ Արթուրի Յախշիբեկյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզի Հրազդան համայնքի Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամասի Տիգրան Մեծի փողոց 6/2 հասցեում գտնվող 0.0070հա մակերեսով (կադաստրային ծածկագիր՝ 07-001-0458-0026-ից) հողամասի գործառնական նշանակությունը բնակավայրերի հասարակական կառուցապատումից փոփոխել բնակելի կառուցապատման:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Սևակ Յախշիբեկյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

13 հուլիսի 2026թ.
ք.Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 հուլիսի 2026 թվականի N 1129-Ա

ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 71-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով, Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 6-րդ բաժնի 30-րդ կետով և հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2026 թվականի հունիսի 25-ի N 160-Ա որոշումը, Արտակ Պողոսյանի 2026 թվականի հունիսի 9-ի դիմումը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Թույլատրել փոխանակել Արտակ Պողոսյանին սեփականության իրավունքով պատկանող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 09062026-07-0078) Կոտայքի մարզի Հրազդան համայնքի Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 14-րդ փողոց 6/3 հասցեում գտնվող 0.0029հա մակերեսով բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամասը՝ Հրազդան համայնքին սեփականության իրավունքով պատկանող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 05052026-07-0167) Կոտայքի մարզի Հրազդան համայնքի Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 14-րդ փողոց 6/2 հասցեում գտնվող 0.0029հա մակերեսով բնակավայրերի հասարակական կառուցապատման համարժեք հողամասի հետ, քանի որ Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 14-րդ փողոց 6/3 հասցեում գտնվող հողամասով անցնում է կոյուղագիծ:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արտակ Պողոսյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

13 հուլիսի 2026թ.
ք.Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 հուլիսի 2026 թվականի N 1130-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 2015 թվականի ապրիլի 10-ի ԿԴ/0091/02/15 քաղաքացիական գործով կայացված վճիռը, որով ճանաչվել է «Հայանտառ» ՊՓԲԸ «Հրազդանի անտառտնտեսություն» ԴՓԲ ընկերության սեփականության իրավունքը 0748-0234 կադաստրային ծածկագրով հողամասի նկատմամբ, հիմք ընդունելով, որ հողամասը չի դասվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի շարքին, չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով «Հայանտառ» ՊՓԲԸ «Հրազդանի անտառտնտեսություն» ԴՓԲ ընկերության սնանկության գործով կառավարիչ Հարութ Էդիկի Ղարիբյանի ներկայացուցիչ Մխիթար Բարիսի Բեգյանի 2026 թվականի հունիսի 18-ի դիմումը, «ԳԵՈԼԵՆԴ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից չափագրված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագիծը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Վերականգնել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Ջրառատ-Մեղրաձոր-Հանքավան ավտոճանապարհի 11 հասցեով (կադաստրային ծածկագիր՝ 07-001-0748-0234) 0,10046 հեկտար մակերեսով հողամասի և դրա վրա մինչև 2001 թվականի մայիսի 15-ը կառուցված շինությունների նկատմամբ իրավունքները՝ ճանաչելով «Հայանտառ» ՊՓԲԸ «Հրազդանի անտառտնտեսություն» ԴՓԲ ընկերության սեփականության իրավունքը:
2. Հողամասի սահմանները որոշվում են «ԳԵՈԼԵՆԴ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից 2026 թվականի հուլիսի 6-ին

չափագրված և Հրազդան համայնքի ղեկավարի կողմից հաստատված հողամասի հատակագծով և շինությունների բնութագրով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Հայանտառ» ՊՓԲԸ «Հրազդանի անտառտնտեսություն» ԴՓԲ ընկերության սնանկության գործով կառավարիչ Հարութ Էդիկի Ղարիբյանի ներկայացուցիչ Մխիթար Բարիսի Բեգյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

13 հուլիսի 2026թ.
ք.Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 հուլիսի 2026 թվականի N 1131-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ, 24-րդ կետերով, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387 որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» օրենքի 1-ին և 3-րդ հոդվածներով և հաշվի առնելով, որ նշված հողատարածքը չի դասվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի շարքին, չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և հիմք ընդունելով Վարդան Ռաֆիկի Գևորգյանի (ծնված՝ 1962 թվականի դեկտեմբերի 15-ին), Մարիետա Ջանիկի Գևորգյանի (ծնված՝ 1968 թվականի օգոստոսի 14-ին), Մովսես Վարդանի Գևորգյանի (ծնված՝ 1985 թվականի նոյեմբերի 16-ին), Լուսինե Վարդանի Գևորգյանի (ծնված՝ 1988 թվականի դեկտեմբերի 15-ի) Գոռ Վարդանի Գևորգյանի (ծնված՝ 1986 թվականի դեկտեմբերի 2-ին) լիազոր ներկայացուցիչ Էդիկ Հովիկի Վիրաբյանի (ծնված՝ 1984 թվականի հունվարի 24-ին) 2026 թվականի հունիսի 18-ի դիմումը, Հրազդանի համայնքապետարանի կողմից 2025 թվականի նոյեմբերի 3-ին տրված քաղվածքը, «ԳԵՈԼԵՆԴ» ՍՊԸ-ի կողմից չափագրված և տրված շինությունների, դրանց պահպանման և սպասարկման համար հողամասի մակերեսների Հրազդան համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագիծը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Վերականգնել Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, Մաքրավան թաղամաս, Կարմրասարի փողոց, թիվ 34 հասցեում գտնվող 07-001-0428-0019 կադաստրային ծածկագրով փաստացի օգտագործվող 3000 քմ մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի վրա մինչև 2001 թվականի մայիսի 15-ը կառուցված

228,57 քմ մակերեսով բնակելի տան նկատմամբ իրավունքները՝ ճանաչելով Վարդան Ռաֆիկի Գևորգյանի, Մարիետա Ջանիկի Գևորգյանի, Մովսես Վարդանի Գևորգյանի, Լուսինե Վարդանի Գևորգյանի, Գոռ Վարդանի Գևորգյանի սեփականության իրավունքը:

2. Հողամասի սահմանները որոշվում են «ԳԵՈԼԵՆԴ» ՍՊԸ-ի կողմից չափագրված, Հրազդան համայնքի ղեկավարի կողմից հաստատված հողամասի հատակագծով և շինությունների բնութագրով:

3. Վարդան Ռաֆիկի Գևորգյանին, Մարիետա Ջանիկի Գևորգյանին, Մովսես Վարդանի Գևորգյանին, Լուսինե Վարդանի Գևորգյանին, Գոռ Վարդանի Գևորգյանին պատկանող պահպանման և սպասարկման համար 07-001-0428-0019 կադաստրային ծածկագրով գույքին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, Մաքրավան թաղամաս, Կարմրասարի փողոց, թիվ 34 (ծածկագիր՝ 07011DLUSP64):

4. Առաջարկել Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեին գրանցել քաղաքացի Վարդան Ռաֆիկի Գևորգյանի, Մարիետա Ջանիկի Գևորգյանի, Մովսես Վարդանի Գևորգյանի, Լուսինե Վարդանի Գևորգյանի, Գոռ Վարդանի Գևորգյանի սեփականության իրավունքներն ամրագրված հողամասի, բնակելի տան նկատմամբ և տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական:

5. Որոշման կատարման կազմակերպումն ու վերահսկողությունը վերապահել Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնին:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Վարդան Ռաֆիկի Գևորգյանի, Մարիետա Ջանիկի Գևորգյանի, Մովսես Վարդանի Գևորգյանի, Լուսինե Վարդանի Գևորգյանի, Գոռ Վարդանի Գևորգյանի լիազոր ներկայացուցիչ Էդիկ Հովիկի Վիրաբյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

13 հուլիսի 2026թ.
ք.Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 հուլիսի 2026 թվականի N 1132-Ա

ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջներով և 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման N 1 հավելվածի 24-րդ կետի 3-րդ ենթակետով.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Հրազդան համայնքին սեփականության իրավունքով պատկանող 1043.4քմ մակերեսով 07-033-0097-0004 ծածկագրով հողամասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, գյուղ Լեռնանիստ, 8-րդ թաղամաս, 23 (ծածկագիր՝ 07022VGLARMP):

2.Հրազդան համայնքին սեփականության իրավունքով պատկանող Լեռնանիստ գյուղի 8-րդ թաղամաս, 23 հասցեում գտնվող 1043.4քմ մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը բնակավայրերի այլ հողերից փոփոխել հասարակական կառուցապատման:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

13 հուլիսի 2026թ.
ք.Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 հուլիսի 2026 թվականի N 1133-Ա

ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջներով և 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման N 1 հավելվածի 24-րդ կետի 3-րդ ենթակետով.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Հրազդան համայնքին սեփականության իրավունքով պատկանող 1559.7քմ մակերեսով 07-033-0097-0014 ծածկագրով հողամասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, գյուղ Լեռնանիստ, 8-րդ թաղամաս, 22 (ծածկագիր՝ 07022QVZ4KLQ):

2.Հրազդան համայնքին սեփականության իրավունքով պատկանող Լեռնանիստ գյուղի 8-րդ թաղամաս, 22 հասցեում գտնվող 1559.7քմ մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը բնակավայրերի այլ հողերից փոփոխել հասարակական կառուցապատման:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

13 հուլիսի 2026թ.
ք.Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 հուլիսի 2026 թվականի N 1134-Ա

ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 11-ի N 194-Ն որոշման հավելվածի 11-րդ և 12-րդ կետերը և անհատ ձեռնարկատերերի հայտերը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Հրազդան համայնքի վարչական տարածքում գործող առևտրի օբյեկտներին տրամադրել ոգելից և ալկոհոլային խմիչքների և ծխախոտային արտադրատեսակների վաճառքի թույլտվություններ՝ համաձայն հավելվածի:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հայտատուներին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

13 հուլիսի 2026թ.
ք.Հրազդան

Հավելված
Հրազդան համայնքի ղեկավարի
2026 թ.հուլիսի 13-ի
Ն 1134-Ա որոշման

ՑՈՒՑԱԿ
ԱՌԵՎՏՐԻ ՕԲՅԵԿՏՆԵՐԻՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

Հ/Հ	Իրավաբանական անձի անվանումը/անուն,ազգանուն/ կամ կազմակերպաիրավական տեսակը	Իրավաբանական հասցե	Գործունեության հասցե	Շինության տեսակը, մակերեսը՝ քառակուսի մետր	Տեղական տուրքի տեսակը, սահմանված դրույքաչափը (դրամ)	Թույլտվության տրամադրման ժամանակահատվածը, մուծված գումարի չափը (դրամ)
1	Ա/Ձ Զորիկ Խաչատրյան	Ք. Հրազդան, Կենտրոն թ-ս, 35/1	Ք. Հրազդան, Կենտրոն թ-ս, 35/1	90 քառ.մ, առևտրի օբյեկտ՝ հիմնական շինություն	ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք, 18000դրամ (եռամսյակի համար)	2026 թվականի երրորդ եռամսյակի համար, 18000
2	Ա/Ձ Մանիկ Ալեքսանյան	Հրազդան համայնք Ջրառատ բնակավայր1/24	Հրազդան համայնք Ջրառատ բնակավայր1/24	20 քառ.մ, առևտրի օբյեկտ՝ հիմնական շինություն	ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք, 7000դրամ (եռամսյակի համար)	2026 թվականի երրորդ և չորրորդ եռամսյակների համար, 14000
3	Ա/Ձ Մանիկ Ալեքսանյան	Հրազդան համայնք Ջրառատ բնակավայր1/24	Հրազդան համայնք Ջրառատ բնակավայր1/24	20 քառ.մ, առևտրի օբյեկտ՝ հիմնական շինություն	ծխախոտային արտադրատեսակների վաճառք վաճառք, 7000դրամ (եռամսյակի համար)	2026 թվականի երրորդ և չորրորդ եռամսյակների համար, 14000
4	Ա/Ձ Գրիգոր Գրիգորյան	Հրազդան համայնք Ջրառատ բնակավայր 4/6	Հրազդան համայնք Ջրառատ բնակավայր 4/6	20 քառ.մ, առևտրի օբյեկտ՝ հիմնական շինություն	ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք, 7000դրամ (եռամսյակի համար)	2026 թվականի երրորդ եռամսյակի համար, 7000
5	Ա/Ձ Գրիգոր Գրիգորյան	Հրազդան համայնք Ջրառատ բնակավայր 4/6	Հրազդան համայնք Ջրառատ բնակավայր 4/6	20 քառ.մ, առևտրի օբյեկտ՝ հիմնական շինություն	ծխախոտային արտադրատեսակների վաճառք վաճառք, 7000դրամ (եռամսյակի համար)	2026 թվականի երրորդ եռամսյակի համար, 7000
6	Ա/Ձ Կարեն Մկրտչյան	Հրազդան համայնք Սոլակ բնակավայր 8/3	Հրազդան համայնք Սոլակ բնակավայր 8/3	90 քառ.մ, առևտրի օբյեկտ՝ հիմնական շինություն	ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք, 18000դրամ (եռամսյակի համար)	2026 թվականի երրորդ եռամսյակի համար, 18000
7	Ա/Ձ Կարեն Մկրտչյան	Հրազդան համայնք Սոլակ բնակավայր 8/3	Հրազդան համայնք Սոլակ բնակավայր 8/3	90 քառ.մ, առևտրի օբյեկտ՝ հիմնական շինություն	ծխախոտային արտադրատեսակների վաճառք վաճառք, 18000դրամ (եռամսյակի համար)	2026 թվականի երրորդ եռամսյակի համար, 18000
8	Ա/Ձ Վահե Վարդանյան	Ք. Հրազդան, Մ/շ թ-ս, 130/11	Ք. Հրազդան, Մ/շ թ-ս, Զ. Անդրանիկի 143/3	22քառ.մ, առևտրի օբյեկտ՝ հիմնական շինություն	ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք, 7000դրամ (եռամսյակի համար)	2026 թվականի երրորդ եռամսյակի համար, 7000
9	Ա/Ձ Վահե Վարդանյան	Ք. Հրազդան, Մ/շ թ-ս, 130/11	Ք. Հրազդան, Մ/շ թ-ս, Զ. Անդրանիկի 143/3	22քառ.մ, առևտրի օբյեկտ՝ հիմնական շինություն	ծխախոտային արտադրատեսակների վաճառք վաճառք, 7000դրամ (եռամսյակի համար)	2026 թվականի երրորդ եռամսյակի համար, 7000

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 հուլիսի 2026 թվականի N 1135-Ա

ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12 կետի, հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 11-ի N 194-Ն որոշման հավելվածի 17-րդ կետի 4-րդ ենթակետը և իրավաբանական անձանց հայտերը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Հրազդան համայնքի վարչական տարածքում տրամադրել արտաքին գովազդի տեղադրման թույլտվություններ՝ համաձայն հավելվածի:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հայտատուներին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

13 հուլիսի 2026թ.
ք.Հրազդան

Հավելված
Հրազդան համայնքի ղեկավարի
2026 թ. հուլիսի 13-ի
N 1135-Ա որոշման

ՑՈՒՑԱԿ
ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

Հ/Հ	Իրավաբանական անձի անվանումը/անուն, ազգանուն/ կամ կազմակերպա իրավական տեսակը	Իրավաբանական հասցե	Գործունեության հասցե	Արտաքին գովազդի մակերեսը՝ քառակուսի մետր	Տեղական տուրքի դրույքաչափը, սահմանված վճարը (դրամ)	Թույլտվության տրամադրման ժամանակահատվածը, մուծված վճարը (դրամ)
1	«ԱՄՏՋ. » ՍՊԸ	Ք. Աբովյան Հանրապետության հր. 1/70	Ք. Հրազդան, Ծաղկաձորի օղակաձև խաչմերուկի տարածք	36 քառակուսի մետր գովազդային վահանակ Ա Բ կողմեր «ԿԱՐԱՍ»	այլ արտաքին գովազդ՝ յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝ 1 500	2026 թվականի ապրիլից-սեպտեմբեր ամիսների համար՝ 324000 դրամ
2	«ԷՅՉ ԷՅ ԳՐՈՒՊ» ՍՊԸ	Ք. Երևան, Շենգավիթ	Ք. Հրազդան, Կենտրոն թ-ս, Օգոստոսի 23	7.93 քառակուսի մետր գովազդային վահանակ «ՀԱԳՈՒՍՏԻ ԱՇԽԱՐՀ»	այլ արտաքին գովազդ՝ յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝ 1 500	2026 թվականի հուլիս, օգոստոս, սեպտեմբեր ամիսների համար՝ 9234 դրամ
3	«ԲԼԵՍՍ» ՈՒՎԿ ՍՊԸ	Ք. Հրազդան , Միկրոշրջան թ-ս 4/2	Ք. Հրազդան , Միկրոշրջան թ-ս 4/2 Հրազդան մ/ճ	1.5 քառակուսի մետր գովազդային վահանակ «ԲԼԵՍՍ »	այլ արտաքին գովազդ՝ յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝ 1 500	2026 թվականի հուլիս, օգոստոս, սեպտեմբեր ամիսների համար՝ 6750 դրամ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 հուլիսի 2026 թվականի N 1136-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՇԵՆՔԵՐԻՑ, ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԴՈՒՐՍ ԱՎՏՈՄԱՏ ԻՆՔՆԱՍՊԱՍԱՐԿՎՈՂ ՍԱՐՔԱՎՈՐՄԱՆ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասի, հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 11-ի N 195-Ն որոշման N 1 հավելվածի 8-րդ կետը և անհատ ձեռնարկատեր Նարինե Սահակյանի 2026 թվականի հուլիսի 07-հայտը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Հրազդան համայնքի վարչական տարածքում տրամադրել շենքերից, շինություններից դուրս ավտոմատ ինքնասպասարկվող սուրճի սարքավորման միջոցով առևտուր իրականացնելու նպատակով սարքավորման տեղադրման թույլտվություն՝ համաձայն հավելվածի:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հայտատուին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

13 հուլիսի 2026թ.
ք.Հրազդան

Հավելված
Հրազդան համայնքի ղեկավարի
2026 թ. հուլիսի 13-ի
N 1136-Ա որոշման

ՑՈՒՑԱԿ
ՇԵՆՔԵՐԻՑ, ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԴՈՒՐՍ ԱՎՏՈՄԱՏ ԻՆՔՆԱՍՊԱՍԱՐԿՎՈՂ ՍԱՐՔԱՎՈՐՄԱՆ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

Հ/Հ	Իրավաբանական անձի անվանումը/անուն,ազգանուն/ կամ կազմակերպա իրավական տեսակը	Իրավաբանական հասցե	Գործունեության հասցե	Տեսակը՝	Տեղական վճարի տեսակը, սահմանված դրույքաչափը (դրամ)	Թույլտվության տրամադրման ժամանակահատվածը, մուծված գումարի չափը (դրամ)
1	Ա/Ձ Նարինե Սահակյան	Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս, 130 շենքի տարածք	Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս, 130 շենքի տարածք	շենքերից, շինություններից դուրս ավտոմատ ինքնասպասարկվող սուրճի սարքավորում	ինքնասպասարկվող սուրճի սարքավորման տեղադրում՝ յուրաքանչյուր ամսվա համար՝ 5000 դրամ	2026 թվականի հուլիս ամսվա համար 5000 դրամ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 հուլիսի 2026 թվականի N 1137-Ա

ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ՕԲՅԵԿՏՆԵՐԻՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 4-րդ կետերի, հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 11-ի N 194-Ն որոշման հավելվածի 11-րդ և 12-րդ կետերը և անհատ ձեռնարկատերերի հայտերը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Հրազդան համայնքի վարչական տարածքում գործող հանրային սննդի օբյեկտներին տրամադրել ոգելից և ալկոհոլային խմիչքների իրացման և հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվություններ՝ համաձայն հավելվածի:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հայտատուներին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

13 հուլիսի 2026թ.
ք.Հրազդան

Հավելված
Հրազդան համայնքի ղեկավարի
2026 թ. հուլիսի 13 -ի
N 1137-Ա որոշման

ՑՈՒՑԱԿ
ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ՕԲՅԵԿՏՆԵՐԻՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

Հ/Հ	Իրավաբանական անձի անվանումը/անուն,ազգանուն/ կամ կազմակերպաիրավական տեսակը	Իրավաբանական հասցե	Գործունեության հասցե	Շինության տեսակը, մակերեսը՝ քառակուսի մետր	Տեղական տուրքի տեսակը, սահմանված դրույքաչափը (դրամ)	Թույլտվության տրամադրման ժամանակահատվածը, մուծված գումարի չափը (դրամ)
1	Ա/Ձ Լուսինե Մինասյան	Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս, 35/20	Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս, Պուրակային 36	190 քառ.մ, հանրային սննդի օբյեկտ՝ հիմնական շինություն	ոգելից և ալկոհոլային խմիչքների իրացում 25000 դրամ (եռամսյակի համար)	2026 թվականի երկրորդ և երրորդ եռամսյակների համար, 50000 դրամ
2	Ա/Ձ Լուսինե Մինասյան	Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս, 35/20	Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս, Պուրակային 36	190 քառ.մ, հանրային սննդի օբյեկտ՝ հիմնական շինություն	հանրային սննդի կազմակերպում իրացում 18000 դրամ (եռամսյակի համար)	2026 թվականի երկրորդ և երրորդ եռամսյակների համար, 36000 դրամ
3	Ա/Ձ Գևորգ Սահակյան	Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս, Ջ. Անդրանիկի 187/5	Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս, Ջ. Անդրանիկի 187/5	25 քառ.մ, հանրային սննդի օբյեկտ՝ հիմնական շինություն	հանրային սննդի կազմակերպում իրացում 5000 դրամ (եռամսյակի համար)	2026 թվականի երկրորդ և երրորդ եռամսյակների համար, 10000 դրամ
4	Ա/Ձ Անահիտ Վանյան	Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս, 242/31	Ք. Հրազդան, Կենտրոն թ-ս, Սահմանադրության 71	20 քառ.մ, հանրային սննդի օբյեկտ՝ հիմնական շինություն	հանրային սննդի կազմակերպում իրացում 5000 դրամ (եռամսյակի համար)	2026 թվականի երկրորդ և երրորդ եռամսյակների համար՝ գործունեությունը սկսել է հունիսից 6400 դրամ
5	Ա/Ձ Մարիամ Հարությունյան	Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս, 87/8	Ք. Հրազդան, Կենտրոն թ-ս, Սահմանադրության 71	20 քառ.մ, հանրային սննդի օբյեկտ՝ հիմնական շինություն	հանրային սննդի կազմակերպում իրացում 5000 դրամ (եռամսյակի համար)	2026 թվականի երկրորդ և երրորդ եռամսյակների համար՝ գործունեությունը սկսել է հունիսից 6400 դրամ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 հուլիսի 2026 թվականի N 1138-Ա

ԳՈՒՅՔԻ ՀԱՍՑԵՆ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ և 8-րդ բաժինների պահանջներով և հիմք ընդունելով Թելման Հայրապետյանի 2026 թվականի հունիսի 30-ի դիմումը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Վանատուր թաղամասի թիվ 11 տան բնակիչ Թելման Ջանիկի Հայրապետյանին սեփականության իրավունքով պատկանող (սեփականության իրավունքի գրանցման վկայական N 1789822, տրված՝ 2006 թվականի փետրվարի 17-ին) Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, Հրազդան քաղաքի Վանատուր թաղամաս 11 ա հասցեում գտնվող գույքի հասցեն փոփոխել՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Վանատուր թաղամաս, 11/1 հասցեով (ծածկագիր՝ 07011TPGVVRH):
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Թելման Հայրապետյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

14 հուլիսի 2026թ.
ք.Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 հուլիսի 2026 թվականի N 1139-Ա

ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջներով և հիմք ընդունելով Հենրիկ Հունանյանի 2026 թվականի հունիսի 29-ի դիմումը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Կոտայքի մարզի Սոլակ գյուղի 1-ին փողոցի թիվ 4 տան բնակիչ Հենրիկ Դերենիկի Հունանյանին սեփականության իրավունքով պատկանող (սեփականության իրավունքի գրանցման վկայական N 2331011, տրված՝ 2007 թվականի ապրիլի 10-ին) Կոտայքի մարզի Սոլակ գյուղում գտնվող հողամասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, գյուղ Սոլակ, 1-ին փողոց, 25 (ծածկագիր՝ 07042EW3KBV5):
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հենրիկ Հունանյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

14 հուլիսի 2026թ.
ք.Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 հուլիսի 2026 թվականի N 1140-Ա

ԳՈՒՅՔԻ ՀԱՍՑԵՆ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ և 8-րդ բաժինների պահանջներով և հիմք ընդունելով Սամվել Թովմասյանի 2026 թվականի հունիսի 29-ի դիմումը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Արշիլ Գորկու 2-րդ նրբանցք թիվ 16 տան բնակիչ Սամվել Ժորայի Թովմասյանին սեփականության իրավունքով պատկանող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 05052026-07-0236) Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, Հրազդան քաղաքի Հարավային թաղամաս 3 հասցեում գտնվող գույքի հասցեն փոփոխել՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Հրազդան-Լեռնանիստ խճուղի, 3 հասցեով (ծածկագիր՝ 07011CMXNAGJ):
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Սամվել Թովմասյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

14 հուլիսի 2026թ.
ք.Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 հուլիսի 2026 թվականի N 1141-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԸ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 252-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի օգոստոսի 3-ի N 920-Ն որոշմամբ հաստատված հավելվածով և հիմք ընդունելով Կոտայքի մարզի Հրազդան համայնքի Հրազդան քաղաքի Ջրառատ թաղամասի 422 տան բնակիչ Ստյոպա Ներսիսյանի 2026 թվականի հուլիսի 13-ի N 5205 դիմումը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հրազդանի համայնքապետարանի 900125002544 հաշվեհամարին որպես անշարժ գույքի հարկ վճարված գումարից 8228 (ութ հազար երկու հարյուր քսանութ) դրամը հետ վերադարձնել Կոտայքի մարզի Հրազդան համայնքի Հրազդան քաղաքի Ջրառատ թաղամասի 422 տան բնակիչ Ստյոպա Ներսիսյանին՝ առաջացած գերավճարի չափով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ստյոպա Ներսիսյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

15 հուլիսի 2026թ.
ք.Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 հուլիսի 2026 թվականի N 1142-Ա

ՂԱԶԱՐ ԲԵՆՅԱՄԻՆԻ ՀՈՒՆԱՆՅԱՆԻՑ ՀԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՉՎՃԱՐՎԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԸ ԳԱՆՁԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Որոշման կարգավորման առարկան.

Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Շրջանային 29 տան բնակիչ Ղազար Բենյամինի Հունանյանը հանդիսանալով գույքահարկ վճարող սուբյեկտ, օրենսդրությամբ սահմանված կարգով չի կատարել գույքահարկ վճարելու պարտականությունը, ինչի կապակցությամբ Կոտայքի մարզի Հրազդանի համայնքապետարանում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով հարուցվել է վարչական վարույթ՝ Հրազդան համայնքի բյուջեի հանդեպ հարկային պարտավորությունները չկատարելու արդյունքում փոխադրամիջոցի հարկի գոյացած գույքահարկի, ինչպես նաև հաշվարկված տույժի գումարների գանձումն օրենքով սահմանված կարգով ապահովելու նպատակով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

Վարչական ակտ ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

Համաձայն համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի կողմից տրամադրված Հայաստանի Հանրապետությունում գործածվող գույքահարկի և հողի հարկի հարկով հարկվող օբյեկտների միասնական համակարգից (vector+ ծրագիր) և փոխադրամիջոցի հարկի հաշվառման համակարգից (VXSOFT ծրագիր) ստացված տեղեկանքների MERCEDES-BENZ S 420 մակնիշի 27 OO 122 հաշվառման համարանիշի ավտոմեքենան սեփականության իրավունքով պատկանում է Ղազար Բենյամինի Հունանյանին և հարկային օրենսգրքով սահմանված կարգով վերջինս չի կատարել փոխադրամիջոցի գույքահարկ վճարելու պարտականությունները, որի հետևանքով առաջացել է՝

1) Փոխադրամիջոցի գույքահարկի գծով 1822639 (մեկ միլիոն ութ հարյուր քսաներկու հազար վեց հարյուր երեսունինը) դրամ հարկային պարտավորություն, որից 1246000 (մեկ միլիոն երկու հարյուր քառասունվեց հազար) դրամ 2011-2020թթ. ապառքի գումար և 576639 (հինգ հարյուր յոթանասունվեց հազար վեց հարյուր երեսունինը) դրամ 2011-2020թթ. ապառքը ժամանակին չվճարելու ընթացքում գոյացած տույժերի գումար

2) Փոխադրամիջոցի գույքահարկի գծով 879958 (ութ հարյուր յոթանասունինը հազար ինը հարյուր հիսունութ) դրամ հարկային պարտավորություն, որից 667500 (վեց հարյուր վաթսունյոթ հազար հինգ հարյուր) դրամ 2021-2025թթ. ապառքի գումար և 212458 (երկու հարյուր տասներկու հազար չորս հարյուր հիսունութ) դրամ 2021-2025թթ. ապառքը ժամանակին չվճարելու ընթացքում գոյացած տույժերի գումար:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2026 թվականի հուլիսի 10-ին ժամը 14:30-ին հրավիրվել են վարչական վարույթի լսումներ, որին մասնակցելու նպատակով պատշաճ ծանուցվել է (հիմք՝ 2026 թվականի հունիսի 17-ի azdarar.am էլեկտրոնային հայտարարությունների պաշտոնական կայքում տեղադրված հայտարարությունը) Ղազար Բենյամինի Հունանյանը: Վերջինս վարչական վարույթի լսումներին չի ներկայացել:

Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է մուծել օրենքին համապատասխան սահմանված հարկեր, տուրքեր, կատարել պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումներ:

Հարկային օրենսգրքի (այսուհետ Օրենսգիրք) 239-րդ հոդվածի համաձայն՝ փոխադրամիջոցների գույքահարկը հարկ վճարողներին սեփականության իրավունքով պատկանող հարկման օբյեկտ համարվող փոխադրամիջոցների համար Օրենսգրքի 50-րդ գլխով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության համայնքների բյուջեներ վճարվող տեղական հարկ է, որը կախված չէ հարկ վճարողների տնտեսական գործունեության արդյունքներից:

Օրենսգիրքի 251-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կազմակերպությունները և ֆիզիկական անձինք փոխադրամիջոցների գույքահարկի տարեկան գումարները (այդ թվում՝ Օրենսգրքի 246-րդ հոդվածի 3-րդ մասի 1-3-րդ կետերով սահմանված դեպքերում և կարգով հաշվարկված գույքահարկի պարտավորության գումարները) իրենց պետական գրանցման (հաշվառման) վայրի համայնքի բյուջե են վճարում մինչև հարկային տարվա դեկտեմբերի 1-ը ներառյալ՝ հաշվի առնելով սույն հոդվածով սահմանված առանձնահատկությունները: Հաշվառման (գրանցման) վայրի բացակայության դեպքում ֆիզիկական անձինք փոխադրամիջոցների գույքահարկի՝ սույն մասում նշված գումարները վճարում են իրենց հիմնական բնակության վայրի համայնքի բյուջե: Եթե ֆիզիկական անձի հիմնական բնակության վայրը Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս է, ապա փոխադրամիջոցների գույքահարկի՝ սույն հոդվածում նշված գումարները վճարվում է փոխադրամիջոցի հիմնական գտնվելու վայրի համայնքի բյուջե:

Օրենսգրքի 401-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հարկի վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը կամ հարկային գործակալը վճարում է տույժ՝ 0.075 տոկոսի չափով: Օրենսգրքի 397-րդ հոդվածի համաձայն՝ հարկային իրավախախտում է համարվում հարկ վճարողի կամ հարկային գործակալի հակաիրավական այնպիսի գործողությունը

կամ անգործությունը, որի համար Օրենսգրքով և (կամ) վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված է հարկային պատասխանատվություն:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 4-րդ կետերի՝ համայնքի ղեկավարը, որպես սեփական լիազորություն, օրենքով սահմանված կարգով կազմակերպում է տեղական հարկերի, տուրքերի և վճարների, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային և պետական սեփականություն հանդիսացող հողերի, համայնքի սեփականություն հանդիսացող գույքի վարձավճարների գանձումն ու վերահսկումը: Տեղական հարկերը, տուրքերը և վճարները չվճարող անձանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով կիրառում է համապատասխան միջոցներ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ մասով, Հարկային օրենսգրքի 4-րդ, 243-րդ, 244-րդ, 247-րդ, 251-րդ, 397-րդ, 400-401-րդ հոդվածներով և 447-րդ հոդվածի 1.1-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 4-րդ կետերով և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով, 34-րդ, 53-րդ, 58-60-րդ և 89-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Ղազար Բենյամինի Հունանյանից հօգուտ Հրազդան համայնքի բյուջեի գանձել ընդհանուր՝ 2702597 (երկու միլիոն յոթ հարյուր երկու հազար հինգ հարյուր իննսունյոթ) դրամ չվճարված հարկային պարտավորությունների գումար:
2. Սույն որոշումը կարող է բողոքարկվել՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 70-րդ և Վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածներով նախատեսված կարգով՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:
3. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով, այն ենթակա է հարկադիր կատարման՝ Արդարադատության նախարարության Հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կողմերին իրազեկելուն հաջորդող օրվանից կամ սույն որոշմամբ ուղղակիորեն շոշափվող անձանց վերաբերյալ տեղեկությունները հայտնի չլինելու դեպքում հրապարակման պահից, azdarar.am-ի կամ համայնքապետարանի տեղեկագրում հրապարակելու միջոցով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

15 հուլիսի 2026թ.
ք.Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 հուլիսի 2026 թվականի N 1143-Ա

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍԱՐԳՍԻ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՑ ՀԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՉՎՃԱՐՎԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԸ ԳԱՆՁԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Որոշման կարգավորման առարկան.

Հրազդան քաղաքի Մյասնիկյան փողոցի 17 տան բնակիչ Հովհաննես Սարգսի Առաքելյանը հանդիսանալով գույքահարկ վճարող սուբյեկտ, օրենսդրությամբ սահմանված կարգով չի կատարել գույքահարկ վճարելու պարտականությունը, ինչի կապակցությամբ Կոտայքի մարզի Հրազդանի համայնքապետարանում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով հարուցվել է վարչական վարույթ՝ Հրազդան համայնքի բյուջեի հանդեպ հարկային պարտավորությունները չկատարելու արդյունքում փոխադրամիջոցի հարկի գոյացած գույքահարկի, ինչպես նաև հաշվարկված տույժի գումարների գանձումն օրենքով սահմանված կարգով ապահովելու նպատակով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

Վարչական ակտ ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

Համաձայն համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի կողմից տրամադրված Հայաստանի Հանրապետությունում գործածվող գույքահարկի և հողի հարկի հարկով հարկվող օբյեկտների միասնական համակարգից (vector+ ծրագիր) և փոխադրամիջոցի հարկի հաշվառման համակարգից (VXSOFT ծրագիր) ստացված տեղեկանքների MERCEDES-BENZ SLK 230 KOMPRESSOR մակնիշի 33 OP 751 հաշվառման համարանիշի ավտոմեքենան սեփականության իրավունքով պատկանում է Հովհաննես Սարգսի Առաքելյանին և հարկային օրենսգրքով սահմանված կարգով վերջինս չի կատարել փոխադրամիջոցի գույքահարկ վճարելու պարտականությունները, որի հետևանքով առաջացել է՝

1) Փոխադրամիջոցի գույքահարկի գծով 604203 (վեց հարյուր չորս հազար երկու հարյուր երեք) դրամ հարկային պարտավորություն, որից 416213 (չորս հարյուր տասնվեց հազար երկու հարյուր տասներեք) դրամ 2012-2020թթ. ապառքի գումար և 187990 (մեկ հարյուր ութսունյոթ հազար ինը հարյուր իննսուն) դրամ 2012-2020թթ. ապառքը ժամանակին չվճարելու ընթացքում գոյացած տույժերի գումար

2) Փոխադրամիջոցի գույքահարկի գծով 332538 (երեք հարյուր երեսուներկու հազար հինգ հարյուր երեսունութ) դրամ հարկային պարտավորություն, որից 252250 (երկու հարյուր հիսուներկու հազար երկու հարյուր հիսուն) դրամ 2021-2025թթ. ապառքի գումար և 80288 (ութսուն հազար երկու հարյուր ութսունութ) դրամ 2021-2025թթ. ապառքը ժամանակին չվճարելու ընթացքում գոյացած տույժերի գումար:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2026 թվականի հուլիսի 10-ին ժամը 14:40-ին հրավիրվել են վարչական վարույթի լսումներ, որին մասնակցելու նպատակով պատշաճ ծանուցվել է (հիմք՝ 2026 թվականի հունիսի 17-ի azdarar.am էլեկտրոնային հայտարարությունների պաշտոնական կայքում տեղադրված հայտարարությունը) Հովհաննես Սարգսի Առաքելյանը: Վերջինս վարչական վարույթի լսումներին չի ներկայացել:

Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է մուծել օրենքին համապատասխան սահմանված հարկեր, տուրքեր, կատարել պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումներ:

Հարկային օրենսգրքի (այսուհետ Օրենսգիրք) 239-րդ հոդվածի համաձայն՝ փոխադրամիջոցների գույքահարկը հարկ վճարողներին սեփականության իրավունքով պատկանող հարկման օբյեկտ համարվող փոխադրամիջոցների համար Օրենսգրքի 50-րդ գլխով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության համայնքների բյուջեներ վճարվող տեղական հարկ է, որը կախված չէ հարկ վճարողների տնտեսական գործունեության արդյունքներից:

Օրենսգիրքի 251-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կազմակերպությունները և ֆիզիկական անձինք փոխադրամիջոցների գույքահարկի տարեկան գումարները (այդ թվում՝ Օրենսգրքի 246-րդ հոդվածի 3-րդ մասի 1-3-րդ կետերով սահմանված դեպքերում և կարգով հաշվարկված գույքահարկի պարտավորության գումարները) իրենց պետական գրանցման (հաշվառման) վայրի համայնքի բյուջե են վճարում մինչև հարկային տարվա դեկտեմբերի 1-ը ներառյալ՝ հաշվի առնելով սույն հոդվածով սահմանված առանձնահատկությունները: Հաշվառման (գրանցման) վայրի բացակայության դեպքում ֆիզիկական անձինք փոխադրամիջոցների գույքահարկի՝ սույն մասում նշված գումարները վճարում են իրենց հիմնական բնակության վայրի համայնքի բյուջե: Եթե ֆիզիկական անձի հիմնական բնակության վայրը Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս է, ապա փոխադրամիջոցների գույքահարկի՝ սույն հոդվածում նշված գումարները վճարվում է փոխադրամիջոցի հիմնական գտնվելու վայրի համայնքի բյուջե:

